«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՏԻՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

ԱՌԱՐԿԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՉԱԽԱԼՅԱՆ

ՄԱՐԶ ՇԻՐԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՄՐՈՒ «ՖՈՏՈՆ ՎԱՐԺԱՐԱՆ»

ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------3

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏՄԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ----------6

ԳԼՈՒԽ2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ---------- 13

ԳԼՈՒԽ3. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՏԻՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ----------15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------25

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«…Ուսուցման գլխավոր խնդիրն է ձևավորել աշակերտների ինքնուրույն, ստեղծագործական մտածողությունը և այս հիման վրա կենսագործել ուսուցման աստիճանաբար անցումը ինքնուսուցման»: [1]Ուսումը աշակերտների կողմից սոցիալական, մշակութային փորձը, գիտելիքները, կարողությունները, հմտությունները յուրացնելու գործընթացն է, նրանց ինքնուրույնությունը լրիվ ապահովելու պայմանով: Անհնար է իրականացնել ուսուցման գործընթացն առանց ուսուցչի և աշակերտների միաժամանակյա գործունեության, սակայն մի պայմանով՝ ապահովել աշակերտների սուբյեկտների դերում հանդես գալու գործընթացը, որի մեջ գերակշռողը պետք է լինի աշակերտների գործունեությունը: Միայն այս դեպքում կբարձրանա ուսման դերը: Եթե ուսուցիչը ,ինչպես հարկն է, չակտիվացնի աշակերտների ճանաչողական գործունեությունը, նրանց չդարձնի սովորող սուբյեկտներ ,դրանց իրականացման համար չկիրառի համապատասխան մեթոդներ, չորոնի նոր ուղիներ ու միջոցներ , որքան էլ նա հաղորդի հարուստ գիտելիքներ,միևնույնն է , սովորողները չեն յուրացնի:Ուսուցման գործընթացը չպետք է դիտել որպես միայն դասավանդման և ուսման մեխանիկական գումար:Եթե այդպես լիներ,այն կարող էր միայն ձանձրույթ պատճառել:Բացի այդ ժամանակակից կրթահամակարգի առաջնահերթ խնդիրն է նոր դարաշրջանի ուսուցչի կերպարի ստեղծումը:Ավանդական ուսուցիչը՝ որպես գիտելիքների փոխանցման ու մեկնաբանման մենաշնորհ ունեցող, իր տեղն է զիջում նոր ուսուցչին ,որը հանդես է գալիս որպես

- *հետազոտող,*
- *ուղղորդող,*
- *աջակցող ,*
- *համաձևավորող,*
- *կազմակերպիչ,*
- *խորհրդատու և այլն :*

Սովորողների շրջանում կատարված հարյուրավոր հետազոտություններ ցույց են տվել ,որ միայն տարեթվերի ու իրադարձությունների պատմության ուսուցումը

հաճախ պատճառ է դառնում պատմություն առարկայից առհասարակ երես թեքելուն:Սովորողները դժվարանում են սովորածը մտապահել ու դրա վերաբերյալ որևէ դատողություն անել: Պատմական ակտիվ մտածողության խթանումը թույլ կտա ապրված հարուստ պատմությունը հասանելի դարձնել սովորողին,անցյալի դիտարկումը վերածել ոգևորիչ և ակտիվ մտածողական գործընթացի ,իսկ վերջնարդյունքում հասնել ավելի խոր ճանաչման,սեփական փորձով ըմբռնել պատմության գիտելիքի կառուցումը,ինչպես նաև սովորողների մոտ մտածողության խոր հմտություններ ձևավորել:Այս ամենն օգտակար կլինի նաև հասարակական կյանքում:

Ի՞նչու է կարևոր և ի՞նչպես անել, որ աշակերտը սեփական փորձով հասկանա, թե ինչպես է ստեղծվում պատմական գիտելիքը, ինչ է պատմության բովանդակային ու գործընթացային գիտելիքը, քննարկի նյութի բովանդակությունը գործընթացային սկզբունքների համատեքստում՝ պատճառներն ու հետևանքները , փոփոխությունն ու շարունակականությունը , և հասկանա , թե ինչպես է որոշվում իրադարձության կամ դերակատարի կարևորությունը, ինչ է պատմական հեռանկարը, էթիկական ինչպիսի հարցեր են առաջանում պատմություն ուսումնասիրելիս:Խիստ կարևոր է, որ օգնենք սովորողներին քննել պատմությունը և բանավիճել դրա շուրջ, ըմբռնել պատմական կարևոր հասկացությունները, ինչպիսին են , օրինակ **փոփոխությունը** և **պատճառը**: Այս գործընթացի կարևորության մասին է խորհել նաև Ն.Բերդյաևը. «Պատմությունը իրադարձությունների հանրագումար չէ: Այն նախևառաջ որոշակի իմաստ է: Վկայակոչել պատմությունը ի վերջո նշանակում է առաջադրել այն մտային ռեալությունը, որը հնարավոր է դարձնում ինչ-ինչ իրադարձություններ դիտարկել որոշակի միասնական հոլովույթի մեջ, հակառակ դեպքում պատմությունը կներկայանար սոսկ իբրև անհատական հիշողությունների հանրագումար:Այլ կերպ՝ պատմական իրադարձությունները դեռևս չեն սպառում պատմությունը . ավելին, իրադարձությունը մտածվում է իբրև պատմական , քանի որ ենթադրվում է , որ պատմությունը կա կանխավ: Ուրեմն, պատմության իմաստը նշանակում է այն նպատակը, դեպի որը միտված են պատմական կոչվող իրադարձությունները» : Պատմության իմաստի բացորոշումը պիտի կարգավորի մարդկային արարքը և բարոյագիտական չափում դառնա վերջինիս համար:Պատմության իմաստի

ընկալումից է կախված նաև հասարակարգի կառուցման մեթոդաբանությունն ու գաղափարախոսությունը:[2]

ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտական աշխատանքի նպատակն է .

- *Խթանել ուսուցիչների կողմից աշակերտների ինքնուրույնությունը և ստեղծագործական կամ ակտիվ պատմական մտածողությունը զարգացնող նորարական մեթոդների կիրառման հմտությունները պատմության դասերին:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն աշխատանքի խնդիրներն են.

- *Հետազոտել ստեղծագործական ակտիվ մտածողությունը և ինքնուրույնությունը զարգացնող ինտերակտիվ մեթոդների և ռազմավարությունների կիրառման սկզբունքները:*
- *Վեր հանել դասի տարբեր փուլերում վերը նշված հմտությունները զարգացնող ռազմավարությունների և մեթոդների կիրառման նպատակահարմարությունը, դրանց առավելություններն ու թերությունները:*
- *Մշակել այդ մեթոդների կիրառման օրինակներ :*

  Ձևակերպել եզրակացություններ և առաջարկություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական ակտիվ մտածողությունը և ինքնուրյունությունը զարգացնող մեթոդների կիրառմամբ դասեր պլանավորելու և դրանց թերություններն ու առավելությունները ընդծելու միջոցով խթանել դրանց կիրառման հմտությունները պատմության դասերին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1.ՊԱՏՄԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

*Պատմության բաղադրիչներն են **անցյալը,գիտելիքը անցյալի մասին** և **անցյալի մասին գիտելիք կառուցելու գործընթացը:** Հետևաբար պատմություն սովորել նշանակում է **անցյալի մասին գիտելիքի ու դրա ընկալման զարգացում և պատմության գիտաճյուղի մասին գիտելիքի ու դրա ընկալման զարգացում:**Չի կարելի պնդել,որ ուսումնառությունը կարող է լինել լիարժեք պասիվ:Սովորողները մտավոր որոշակի ակտիվություն են ցուցաբերում նույնիսկ այն ժամանակ ,երբ պարզապես տեղեկություն են ստանում և մտովի մշակում այն:Բայց որքան տեղեկատվության մշակման ավելի բարդ աշխատանք խթանենք,այդքան ավելի շատ կմտածեն նրանք:Մտածելու գործառույթը կենսական դեր ունի որևէ բան իմանալու և հիշելու համար ,քանի որ հիշողությունը մտածելու նստվածքն է:Պատմության ուսումնառությունը նույնպես պետք է հարցադրումներով զբաղվի,առաջ քաշի անցյալի մասին հարցեր և այդ հարցերին պատասխաններ գտնի:Այս գործընթացը խթանում է գիտելիքի ստեղծումը և սովորողի ներգրավվածությունը՝մանավանդ երբ հարցերը բաց ու մոտիվացնող են: Պատմությունը գիտելիք է կառուցում ՝ քննելով անցյալի §մնացորդները/ .արխիվային փաստաթղթեր, հնավայրեր, թանգարանային արտեֆակտները ,ընտանեկան հուշերը և այլն:Իրադարձությունների զարգացման հիմնական ժամանակագրությունը պարզելուց հետո բազմաթիվ հարցեր են առաջանում:Հարցեր իրադարձությունների **պատճառների** .ժամանակի ընթացքում տեղի ունեցած **փոփոխությունների**, պատմական դերակատարների ու զարգացումների **կարևորության** մասին:Ավելին ՝ անցյալի գործողությունները հասկանալու համար անհրաժեշտ է պատմական **հեռանկար** ունենալ:Դա օգնում է ըմբռնել անցյալի դերակատարների համոզմունքներն ու նպատակները:Պատմության ուսումնասիրությունը հաճախ առաջ է քաշում նաև էթիկական հարցեր,օրինակ՝ ինչպե՞ս ներկայում վերաբերվել և մեկնաբանել անցյալի որոշ գործողություններին:Ըստ այդմ ՝պատմական մտածողության այս հասկացությունների հետ փոխկապակցված ինչպիսի՞ ընկալումներ պիտի ձգտենք*

զարգացնել և ինչպիսի՞ մարտահրավերներ են այդ հասկացությունները ստեղծում ներկայում:

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հասկանալու համար, թե ինչպես է ստեղծվում պատմությունը անհրաժեշտ է որոշակի աշխատանք կատարել աղբյուրների հետ, ինչպիսին են ,օրինակ, հին նկարները , արտեֆակտները և արխիվային փաստաթղթերը:Որպեսզի ընկալենք, թե ինչպես են պատմաբաններն աղբյուրներ օգտագործում գիտելիք ձևավորելու համար, որոշ հասկացություններ ճշգրտելու կարիք կա:Սովորողները պետք է .

- *Իմանան, թե ինչ է **վկայություն** հասկացությունը,այսինքն՝ ինչպես է տեղեկատվության աղբյուրը վերածվում պատմական աղբյուրի՝ պատմական հարցադրումների համատեքստում:*
- *Ծանոթ լինեն **հետևություն** հասկացությանը և կարողանան հարցադրման շրջանակում առկա վկայության հիման վրա հետևություններ կատարել:*
- *Տեղյակ լինեն,որ միևնույն աղբյուրները կարող են կիրառվել տարբեր հարցադրումների, փաստարկների ու վերլուծությունների համար :*
- *Տեղյակ լինեն , որ ցանկացած հարցադրման առանցքը հենց հարցն է, և հարցի փոփոխությունը փոխում է ամեն ինչ՝ինչպես հարցադրման համար էական համարվող աղբյուրները , այնպես էլ դրանց վերլուծությամբ դուրս բերվող եզրակացությունները:*

*Ինչպե՞ս կարող ենք սովորողներին օգնել զարգացնել այս ընկալումները:Պետք է դասարանում պատմական աղբյուրներից հաճախ օգտվենք և խրախուսենք ամենատարբեր փորձարկումները դրանց հետ:Պետք է հնարավորինս շատ առաջադրանքներ կիրառենք, որոնց շրջանակներում սովորողները կկարողանան աղբյուրների հիման վրա հարցադրումներ առաջ քաշել և զարգացնել:Հարկավոր է խրախուսել նաև այնպիսի առաջադրանքները ,որոնց շրջանակում տրված հարցադրումների համար սովորողներն իրենք առաջադրեն, թե պատմական ինչպիսի աղբյուրներ կարելի է դիտարկել տվյալ պարագայում:Սովորողների ունեցած գիտելիքի հետ զուգահեռներ անցկացնելը շատ օգտակար է **վկայություն** եզրույթը լավ հասկանալու համար: Զգալի արդյունքի կարելի է հասնել նաև անծանոթ աղբյուրների և անցյալի նյութական մշակույթի հետ աշխատելու միջոցով:*

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏՃԱՌ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔ

Մի բան է ծանոթ լինել պատմական շարադրանքին, և բոլորովին այլ բան է դրա իրական ընկալումը , ինչը հնարավոր է միայն այն դեպքում , երբ սովորողները կարողանում են վերլուծել անցյալի շարադրանքը և բացատրել, թե ինչու են տվյալ իրադարձությունները զարգացել հենց այդ կերպ:Սովորողները պետք է .

- *Տեղյակ լինեն , որ պատմաբանները պատճառահետևանքային փաստարկներ են կազմում, որպեսզի բացատրեն,թե ինչու և ինչպես են տեղի ունեցել անցյալի իրադարձությունները:*
- *Տեղյակ լինեն,որ պատճառահետևանքային փաստարկները կախված են ընկալման տարբեր մոդելներից և , ըստ այդմ, ենթակա են կատարման ու վիճարկման:*
- *Կարողանան կառուցել պատճառահետևանքային փաստարկներ՝ վերլուծական տարբերակումներով և աստիճանակարգմամբ, ինչպես նաև կարողանան վերլուծել և գնահատել այլոց փաստարկները:*

Այսօրինակ ընկալումների զարգացումը ենթադրում է մի շարք կարողություններ, այդ թվում՝

- *Բարդ բառապաշարի ընկալում, ինչպես նաև եղանակավորող և պայմանական լեզվի հմուտ կիրառում:*
- *Վերլուծական դասակարգումների և հասկացությունների ընկալում:*
- *Անցյալի ժամանակագրության և իրադարձությունների տիպերի, գործընթացների ու իրավիճակների վերաբերյալ խոր գիտելիք:*

Ստորև ներկայացվում է սովորողների պատճառահետևանքային տրամաբանությունը զարգացնող մի շարք ռազմավարություններ:Սովորողներին հանձնարարել ստեղծել այնպիսի իրադարձությունների մոդելներ և դիագրամներ,որոնք տեսանելի կերպով ցույց կտան պատճառահետևանքային շղթաները , դրանց կապերը և արդյունքները:

- *Սովորողներին տալ պատճառների ցուցակ կամ պատճառները ներկայացնող քարտեր և խնդրել բացատրել դրանք՝ինչպես առանձին – առանձին,այնպես էլ միասին վերցված:*

- *Սովորողներին տալ իրադարձության շարադրանք, որի որևէ դրվագ նրանք պետք է բացատրեն շարադրանքի տարբեր տարրերը իրարից առանձնացնելու և վերակազմելու միջոցով:*
- *Սովորողներին հանձնարարել անցյալում որոշում կայացնող որևէ մարդու դեր ստանձնել,ստեղծել որոշումների կայացման պահերի վերարտադրման համատեքստ և որոշումներ կայացնել ու կանխատեսումներ անել դրանց հնարավոր ազդեցությունների վերաբերյալ:*
- *Սովորողներին հանձնարարել այլընտրանքային պատմության վերլուծություն կատարել, որպեսզի քննեն ու ամրապնդեն տարբեր բաղադրիչների միջև եղած կապերի վերաբերյալ սեփական ընկալումը:Օրինակ, ի՞նչ կլիներ, եթե Պապ թագավորը չսպանվեր հռոմեացիների կողմից:*

Եթե ցանկանում եք ,որ սովորողները, ի թիվս մտածողության այլ ձևերի , տիրապետեն պատճառահետևանքային մտածողությանը, ապա պետք է սեփական մտքերն ընդարձակ շարադրելու հնարավորություն տալ նրանց, ինչպես նաև՝ այդ շարադրանքի համար անհրաժեշտ կոնցեպտուալ ու լեզվական գործիքներ, քանի որ վերլուծական միտքը հենց դրանցից է կախված:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Եթե պատմության ընթացքում փոփոխություններ չլինեին , ապա պատմության վերաբերյալ ասելիք գրեթե չէր լինի:Պատմական փոփոխության տարբեր տեսակներ կան՝ արագ, հեղափոխական փոփոխություններ ,դանդաղ , աստիճանական փոփոխություններ և այլն: Փոփոխություններն ընկալելու համար պետք է հասկանալ նաև շարունակականությունը: Հաճախ փոփոխությունը տեսանելի է դառնում , երբ այն համեմատում ենք շարունակականության հետ:Սովորողները պետք է.

- *Ճանաչեն փոփոխության տարբեր տեսակները :*
- *Ընկալեն ,որ փոփոխության և շարունակականության վերաբերյալ պնդումները հարաբերական բնույթ են կրում՝ կախված դրանց հեղինակից ու փոխվում են ըստ հարցադրման, հասկացությունների ,թիրախի և ընտրված վկայության տեսակների:*

- *Գնահատեն շարունակականության ու փոփոխության վերաբերյալ այլոց դատողությունները, ինչպես նաև ստեղծեն և հիմնավորեն ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերաբերյալ փոփոխության ու շարունակականության իրենց մոդելները:*

ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատմական նշանակություն ուսումնասիրելը շատ լավ խթան է պատմական բաղադրյալ մտածելակերպ զարգացնելու համար, քանի որ մարդկանց կամ իրադարձություններին այս կամ այն նշանակությունը վերագրելը նրանց բնատուր բնորոշ նշում չէ, այլ վիճարկելի պնդում:Սովորողները պետք է .

- *Ընկալեն, որ նշանակության վերաբերյալ պնդումները կախված են անցյալի իրադարձությունների, խնդիրների և անձնավորությունների մասին ունեցած վիճարկելի պատկերացումներից:*
- *Ընկալեն , որ նշանակության մասին մտածելն ինքնին ենթադրում է մտածել այն չափանիշների շուրջ , ըստ որոնց որոշվում է այդ նշանակությունը:*

Օրինակ, սովորողներին կարող եք հանձնարարել հանրային հուշարձանային ճարտարապետությունը վերստեղծելու սեփական նախագծեր կազմել ,ինչի արդյունքում նրանք կբանավիճեն ու կառանձնացնեն հայոց պատմության այն անձանավորություններին , որոնք արժանի են հիշատակման:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

Պատմության ուսումնառության կարևոր վերջնարդյունքներից մեկը ժամանակի զգացողության զարգացումն է, ինչպես նաև գիտակցումը, թե ինչպես է ժամանակի ընթացքում փոխվում մարդկանց մտածելակերպը: 21-րդ դարի հայերը հավանաբար բոլորովին այլ կերպ են մտածում, քան 11-րդ դարում Կիլիկիայում ապրող հայերը:Այս ընկալումը շատ կարևոր է զարգացնել: Պատմությունը հաճախ ենթադրում է բացատրություն, և որպեսզի կարողանանք բացատրել մարդկանց վարքը, պետք է հասկանանք նրանց համոզմունքներն ու դավանած արժեքները, ընդհանուր ասած՝ մշակույթները փոխվում են ժամանակին զուգահեռ ու ժամանակի ընթացքում: Պատմություն հասկանալու բարդություններից մեկն այն է, որ հարկավոր է սովորել

մտածել սեփական արժեհամակարգից ու համոզմունքներից դուրս և փորձել աշխարհին նայել այնպես, ինչպես նայում էին անցյալի մարդիկ:Սա կրկնակի բարդ է, քանի որ անցյալը մշակութային տեսանկյունից համասեռ չէ.տարբեր խմբեր ունեին տարբեր հավատալիքներ և արժեհամակարգեր:Սովորողները պետք է.

- *Հասկանան,որ անցյալում մարդկանց համոզմունքներն ու դավանած արժեքները հաճախ տարբեր են ներկայիս համոզմունքներից և արժեքներից:*
- *Հասկանան,որ անցյալի մարդկանց վարքն ընկալելու համար պետք է անպայմանորեն փորձել վերականգնել նրանց ունեցած պատկերացումները:*
- *Գիտակցեն, որ անցյալի գործողություններն ու դերակատարներին պետք է դիտարկել նրանց տեղանքի և ժամանակի համատեքստում:*
- *Անցյալի գործողությունները բացատրելիս հասկանան այնպիսի վկայություններ կիրառելու կարևորությունը, որոնք թույլ կտան փաստարկել անցյալում եղած արժեքներն ու համոզմունքները:*

Իրական ուսումնառությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ սովորողներին խնդրում են բացատրել,թե ինչու են անցյալի այս կամ այն իրավիճակում հայտնված կերպարները ներկայում ապրող մարդկանց որոշումներից տարբերվող որոշումներ կայացրել նույն իրադրության դեպքում:Ո՞րն է պատճառը.համոզմունքների տարբերությու՞նը, ունեցած գիտելի՞քը, արժեհամակա՞րգը, թ՞ե այլ գործոններ:Որպեսզի առաջադրանքն իմաստավորվի, ցանկալի է, որ վերարտադրությունն անցյալի իրականությանը հնարավորինս մոտ լինի և առավելագույն հանգամանալից տեղեկատվություն տրամադրի սովորողներին՝ որոշումներ կայացնելու համար:Անցյալի կերպարների կայացրած որոշումները բացատրելիս անհրաժեշտ է սովորողներին նաև կերպարների համոզմունքների մասին հնարավորինս ամփոփ տեղեկատվություն տրամադրել:

ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ

Քանի որ պատմությունն ուսումնասիրում է մարդկային գործողություններ, այն անխուսափելիորեն առաջ է քաշում էթիկական հարցեր:Մարդկանց չենք կարող ուսումնասիրել նույն զգայական չեզոքությամբ, որով ուսումնասիրում ենք աշխարհագրություն կամ քիմիա: Բացի դրանից, անցյալը հաճախ պարունակում է

շատ խնդրահարույց պատմություններ՝ ջարդերի, փոքրամասնությունների շահագործման և այլ սարսափների մասին, ինչպես նաև վսեմ պատմություններ՝ հերոսության ու ինքնազոհության մասին:Հետևաբար, բնական է, որ պատմություն ուսումնասիրելիս առաջանում են մեղավորության և այլ բնույթի բարոյական հարցեր:Վերջապես, մարդիկ հաճախ ցանկանում են անցյալից դասեր քաղել, անցյալից սովորել, սխալները չկրկնել:Սովորողները պետք է.

- *Ընկալեն անցյալի համատեքստը վերակառուցելու կարևորությունը և խուսափեն անցյալի մարդկանց որևէ այլ ժամանակի չափանիշներով դատելուց:*
- *Դիտարկեն, թե ինչ պարտավորություններ ունենք մենք այսօր անցյալի մարդկանց հանդեպ,օրինակ՝ ոգեկոչման կամ անցյալում գործած սխալների հատուցման տեսանկյունից:*
- *Դիտարկեն, թե որքանով կարող ենք անցյալի հիմքով ներկայում հետևություններ անել՝հաշվի առնելով համատեքստի փոփոխությունն ու ներկայի և անցյալի միջև եղած տարբերությունները:*

Որպեսզի սովորողները պատմական մտածողություն ձևավորեն և ոչ թե միայն դրա որոշ հատվածները յուրացնեն, պետք է խրախուսել նրանց ամբողջական պատմական մտածողություն կիրառել:Եթե իսկապես ուզում ենք սովորողների մտածողությունը զարգացնել, ապա պետք է ուսումնառության այնպիսի փորձառություններ ստեղծենք, որ նրանք մտածեն սեփական մտածողության մասին:Սա կօգնի նրանց խորացնել ուսումնասիրվող նյութի և այն ուսումնասիրելու համար կիրառվող գործիքների ընկալումը:Սովորողներին պետք է խթանել նաև, որ համադրեն պատմական մտածողության տարբեր բաղադրիչները: Սովորողների պատմական մտածողությունը կզարգանա, եթե նրանց հանձնարարենք մտածել պատմության մասին՝որպես իմացության ձևի, ինչպես նաև դրա սահմանների ու ներուժի մասին:[3]

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿԱՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

*Հարկավոր չէ առանձնացնել գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացումը մտավոր զարգացումից և այլ որակներից , քանի որ զարգացման բոլոր տեսակները՝ մտավոր, գեղագիտական , բարոյական , համապատասխան դաստիարակության արդյունք են:Իսկ այդ դաստիարակությունն իրականացվում է նաև որոշակի գիտելիքներ ձեռք բերելու գործընթացի շնորհիվ: Այն պետք է ներկայացվի հետևյալ կերպ.**«Ուսուցումը ուսուցիչների և աշակերտների փոխներգործության հստակ կազմակերպված, նպատակաուղղված և կառավարվող գործընթացն է՝ կրթության բովանդակության լիարժեք յուրացման միջոցով ապահովելու համար աշխարհայացքի ձևավորումը, մտավոր ուժերի և ներուժի հնարավորությունների զարգացումը...»:***Ճիշտ չէ դասանպատակը սոսկ գիտելիքների, հմտությունների և կարողությունների յուրացմանը հանգեցնելը, ինչպես նաև դասի համար միմյանցից առանձնացված կրթական, դաստիրակչական և զարգացման նպատակներ ընտրելը:[4] Հարկադրական ուսումնական գործունեությունը չի ապահովում աշակերտի անձնավորության դրական զարգացումը:Դրական զարգացնող է այն գործունեությունը , որն աշակերտն իրականացնում է իր ցանկությամբ:Այս հարցում ճիշտ կողմնորոշվելու համար նշանակություն ունի այն տեսակետը, համաձայն որի, մարդու դրական զարգացնող դաստիրակությունն իրականացվում է այն ժամանակ, երբ նա գործունեության մեջ է ընդգրկվում սեփական ձգտումներով, որոնք համապատասխանում են այդ գործունեության բովանդակությանը:Բավականաչափ բովանդակալից է և Ստենդալի դիտողությունները Նապոլեոնի նախարարների մասին.«Լինելով Նապոլեոնի հրամանների սոսկ կատարողները՝ նրանք զրկվում էին ինքնուրույնությունից, և նման գործելակերպը դժբախտ մինիստրներին լիակատար հիմարության էր հասցնում»Այս նույնն է կատարվում դպրոցում ուսուցման պրոցեսում, երբ սովորեցնողների նպատակները հեռու են սովորողների մտադրությունից կամ հակասում են միմյանց, երբ սովորողները միայն կատարողներ են:[5]*

Այսօր տեսության մեջ և պրակտիկայում շարունակվում է դասանպատակի հեղինակ համարել միայն ուսուցչին, իսկ դասի մանկավարժական նպատակ

համարել ուսուցչի անելիքը, որը սխալ է համարվում:Քանի որ ուսուցման գործընթացը գործունեության երկու տեսակների՝ մանկավարժականի և աշակերտականի համակարգ է ,ուստի նրանում առկա է երկու նպատակ՝ մանկավարժական և աշակերտական:Դրանց հակադրվելու դեպքում չի ձևավորվում լիարժեք առաջադիմություն՝ հատկապես սովորողների անձնավորության զարգացման իմաստով: Ուսուցման գործընթացի մանկավարժական նպատակը դասանյութի բովանդակած հնարավորությունները աշակերտի զարգացման համար իրականություն դարձնելն է՝ ամեն անգամ հաշվի առնելով այդ զարգացման մեջ կայացող կոնկրետ տեղաշարժերը:Ուսուցման գործընթացի աշակերտական նպատակը մանկավարժի գործունեության շնորհիվ սովորողի մեջ ծագած հարցերի պատասխաններ ստանալն է, հարցեր, որ մտահոգում, անհանգստացնում են աշակերտին:Աշակերտական գործունեության նպատակ է նաև, դարձյալ մանկավարժական գործունեության շնորհիվ, սովորողի որոշակի պահանջմունքների ակտուալացումը,որի շնորհիվ նա դրանց բավարարմանն է ձգտում՝ ինքնակամ մասնակցելով ուսուցչի կողմից նախատեսված ուսումնական գործունեությանը:

Ըստ Ս.Ի.Հեսսենի դասը ստեղծագործությամբ հագեցնելու համար ամենից առաջ անհրաժեշտ է , որ դասի նպատակները միշտ այնպիսին լինեն ,որ ,կարծես ,թե աշակերտն է այն դրել իր առջև, չնայած ուսուցչի կողմից են որոշված:Ահա , թե ինչու դրանք պետք է հասկանալի լինեն աշակերտին, ակնհայտ իրենց նշանակությամբ, սիրով ու հետաքրքրությամբ յուրացված նրանց կողմից:[6]

Հետևաբար ուսուցման մեթոդներ մշակելուց և դրանք կիրառելուց պարտադիր պետք է հաշվի առնել այս կարևոր հանգամանքը:Այս փաստին անդրադարձել է Ի.Յ.Լերները մեթոդի իր կողմից տրված բնորոշման մեջ:[7]

Ժամանակի ընթացքում պատմության բովանդակությունն անխուսափելիորեն փոխվում է, դառնում անհամեմատ ավելի տարողունակ ու բազմատեսանկյուն:Այս բոլոր խորքային փոփոխությունները ազդում են նաև պատմության դասավանդման բովանդակության և մոտեցումների վրա:Հենաբար, ճիշտ ընտրված ռազմավարությունների կիրառման դեպքում կարելի է զարգացնել պատմական ակտիվ մտածողություն՝ փոխելով սովորողների ընկալումները պատմության վերաբերյալ:

ԳԼՈՒԽ3.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՏԻՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ : ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Պատմական ծաղրանկարի ստեղծում-*Այս մեթոդը արդյունավետ միջոց է պատմական համատեքստն ավելի խորը հասկանալու , վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ զարգացնելու համար:Սովորողները ծաղրանկարում կարող են արտահայտել իրենց դիրքորոշումները ժամանակաշրջանի կամ իրադարձությունների վերաբերյալ ՝զարգացնելով միաժամանակ ստեղծագործական ունակություններ:Այդ աշխատանքը կատարելուց սովորողներից կպահանջվի նաև հետազոտական ինքնուրույն աշխատանք ծաղրանկարները ուսումնասիրելու համար , որպեսզի ծանոթանան դրանք ստեղծելու օրինաչափություններին. Ինչպիսի՞ սիմվոլներ և ուղերձներ են պարունակում, ի՞նչ ոճով են ստեղծված:Ընտրել պատմական ժամանակահատվածը կամ իրադարձությունը որն արտացոլվելու է ծաղրանկարում:Շատ կարևոր է նաև սովորողներին թույլ չտալ ծաղրանկարում բառեր կիրառել, ինչը նրանց կստիպի կենտրոնանալ նկարի տեսողական բաղադրիչների շուրջ ,այլ ոչ թե աշխատանքն արագ վերջացնելու համար բառեր կիրառել:Մեկ դասաժամից ավելին ընդգրկող թեմաների դեպքում սովորողները կարող են փոխանակել իրենց ծաղրանկարները ՝առաջարկելով գուշակել նաև դրանց ուղերձները:Օրինակ,սովորողներին կարելի է առաջարկել «Խորհրդային Հայաստանը ստալինյանյան բռնատիրության տարիներին» թեմայով ծաղրանկարներ կազմել՝ որպես թեմայի ամփոփում:Յանկալի է աշխատանքը կատարել անհատական կամ 2 հոգանոց խմբերով ՝բոլորի ներգրավվածությունը ապահովելու և բոլորի կողմից թեմայի ընկալումը պարզելու համար:*

Պատմական հետքերի որոնում-*Այս մեթոդը հիանալի միջոց է միջավայրի պատմությունն ուսումնասիրելու,թիմային աշխատանքի հմտություններ ձեռք բերելու համար,նախագծային հետազոտական աշխատանքներ կազմակերպելու համար , ինչը կձևավորի սովորողի մոտ ինքնուրույնություն և նախաձեռնողական ունակություններ:Օրինակ,հայտնի է,որ խորհրդային շրջանում մեծ գործարաններում , ֆաբրիկաներում և այլ կառույցներում լայնորեն տարածված էին հայտնի նկարիչների ստեղծած որմնանկարները:Սովորողներին առաջարկել որոնել,գտնել և*

լուսանկարել ՀՀ քաղաքների գործարաններում և այլ կառույցներում առկա Մինաս Ավետիսյանի ,Հակոբ Հակոբյանի և ուրիշների հեղինակած որմնանկարները:

Նախագծի հետազոտական հարցեր .

- *Քանի՞ որմնանկար եք գտել և որտե՞ղ են դրանք գտնվում:*
- *Ե՞րբ են ստեղծվել դրանք և ի՞նչ վիճակում են այժմ:*
- *Ինչ՞ու էր ԽՍՀՄ-ում ,մասնավորապես Խորհրդային Հայաստանում ընդունված որմնանկարներ պատկերել գործարաններում ու տնտեսական ,գիտահետազոտական և նման այլ նշանակություն ունեցող կառույցներում:*
- *Նկարչական ի՞նչ ոճ ունեն որմնանկարները և ինչ՞ու են հենց այդ ոճով նկարվել:*
- *Որմնանկարները փրկելու ի՞նչ առաջարկներ կարող եք ներկայացնել:*
- *Եթե տեղափոխման կարիք կա , ապա որտե՞ղ կցանկանայիք դրանք տեսնել և ինչ՞ու հենց այդ վայրում:*

Աշխատանքը կարելի է նաև զարգացնել՝ հետազոտական նախագծի թեմայով դպրոցում ֆոտոթանգարան պատրաստելով:Սովորողները կարող են քննարկել դրանց պահպանման հարցերը:

Պատմական հուշարձանի նախագծում կամ վերստեղծում նոր տեսանկյունից - *Այս մեթոդը հիանալի միջոց է պատմության մեկնաբանողական հմտություններ զարգացնելու համար:Կարևոր է ,որ սովորողը մեկնաբանի , թե պատմական ինչ բովանդակություն և ուղերձներ է պարունակում հուշահամալիրի հետ կապված յուրաքանչյուր որոշումն ու մտահղացումը:Սովորողները կարող են կա՛մ նոր հուշարձանի նախագծի շուրջ աշխատել,կա՛մ վերստեղծել որևէ գործող հուշարձան:Վերջինը հատկապես արդյունավետ է այն դեպքում, երբ պետք է վերլուծել , թե ինչպես է ներկայացվում միևնույն պատմական նյութը տարբեր ժամանակներում և տարբեր դիտանկյուններից:Օրինակ,հուշահամալիրի կամ հուշարձանի գաղափարի մասին մտածելու համար ուսումնասիրել մի քանի հուշարձան:Նշել , որ այն կարող է լինել արվեստի ցանկացած ոճի,որ սովորողները կարող են հենց իրենց բնակավայրի կամ ցանկացած այլ վայրի պատմության հետ կապված հուշարձանի գաղափար հղանալ:Առաջարկել սովորողներին սահմանել , թե ինչ դիտանկյունից պետք է ներկայացնի ընտրված*

պատմական նյութը:Սովորողները պետք է ինքնուրույն աշխատեն նախագծի վրա:Թեմայի ավարտին կազմակերպել քննարկում յուրաքանչյուր նախագծի տրամաբանությունն ուսումնասիրելու համար:

Գործող հուշարձանի վերստեղծում նոր դիտանկյունից *– Ընտրել որևէ հուշարձան, որն անդրադառնում է պատմական որևէ ժամանակաշրջանի կամ իրադարձության:Սովորողների հետ վերլուծել ,թե գործող հուշարձանն ինչ դիտանկյունից է անդրադառնում ընտրված պատմական նյութին: Սովորողներին առաջարկել սահմանել թե նախագծվող հուշարձանը ինչ դիտանկյունից պետք է ներկայացնի գործող հուշարձանի պատմական նյութը: Թեմայի ավարտին կազմակերպել քննարկում յուրաքանչյուր նախագծի տրամաբանությունն ուսումնասիրելու համար:Օրինակ,ենթադրենք , որ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը չի կառուցվել 1965-1967թթ..,և այն փորձելու են սովորողները կառուցել:Հուշարձանը չպետք է կառուցել նույն տեսքով , ոճով ու տրամաբանությամբ:Սովորողների հետ քննարկել , թե ինչ դիտանկյունից է հուշարձանն անդրադառնալու Ցեղասպանությանը , ինչպիսի՞ ուղերձով է դա արտահայտվելու, ինչպիսի՞ զգացողություններ է առաջ բերելու , ի՞նչ տեսք է ունենալու :Քննարկման ավարտին կարելի է ուսումնասիրել համանման իրադարձությանն անդրադարձող այլ հուշարձաններ:*

Պատմության առեղծվածի բացահայտում *– Այս ռազմավարությունը խթանում է դեդուկտիվ մտածողությունը , սովորողները սկսում են ավելի ուշադիր լինել պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերին :Սովորողներին հանձնարարել որևէ ժամանակաշրջանում գործող խուզարկուի դեր:Նրանք պետք է ինքնուրույն կամ խմբերով բացահայտեն որևէ առեղծվածային իրադարձության հանգամանքները: Ներկայացնել առեղծվածային իրադարձությունը , որ պետք է բացահայտեն:Այս ռազմավարությունը կարելի է կիրառել դասի խթանման փուլում ինքնուրույն ճանաչողական հմտությունները զարգացնելու համար:*

- *Մի շարք աջակցող հարցեր տալ, որոնք կօգնեն մանրամասնել տեղի իրադարձության պատճառներն ու հետևանքները:*

- *Սովորողներին տրամադրել նաև պատմական աղբյուրներ:Որքան տարբերակված և հակասական ,այնքան ավելի բարենպաստ հնարավորություն կստեղծվի մտածելու համար:*
- *Խրախուսել սովորողներին կազմել առեղծվածային իրադարձության իրենց բացահայտումը՝ պատասխանելով տրված հարցերին: Կարելի այս ռազմավարությունը վերածել դասարանային առաջադրանքի , որտեղ բոլոր սովորողները միասին են վերլուծում իրադարձությունը:*

Օրինակ.Բացահայտել Պապ թագավորի սպանությունը 374 թ.:

Հարցերի օրինակներ՝

-Որտե՞ղ սպանվեց Պապը:Որտեղի՞ց էր Պապը եկել այն քաղաք,ուր նրան սպանեցին : Ինչու՞ սպանեցին հենց այդ վայրում:

-Շահագրգիռ ի՞նչ կողմեր կային Պապ թագավորի սպանության մեջ :Գտնել կասկածյալներին:

-Ինչու՞ սպանեցին Պապ թագավորին:

Պատկերի ակնթարթային դիտում *– Այս ռազմավարությունը կարելի է կիրառել դասի խթանման փուլում:Պատմական նկարների, կտավների հետ սոսկական ծանոթությունը կարող է սովորողների համար ձանձրալի լինել:Մինչդեռ այդպիսի աղբյուրները վերլուծական հարուստ տեղեկություններ են պարունակում:Պարզապես այդպիսի աղբյուր ցուցադրելու փոխարեն , կարելի է քննարկումը սկսել դատարկ էկրանով:*

- *Սովորողներին տեղեկացնել ,որ 5 վայրկյանով պատկեր եք ցույց տալու , որից հետո էկրանն անջատելու եք , որպեսզի նրանք քննարկեն , թե ինչ են մտապահել տվյալ պատկերի մասին :*
- *Պատկերը ցույց տալուց հետո անջատել էկրանը:*
- *Այն տեսնելուց հետո սովորողները պետք է ինքնուրույն կամ խմբով քննարկեն տեսակը:*
- *Պատրաստել աջակցող հարցեր.օրինակ՝ ո՞վ է պատկերված , ի՞նչ ժամանակաշրջանի գործ է ,ինչու՞ է ստեղծվել , որտե՞ղ է ստեղծվել, ո՞րն է գործի հիմնական ասելիքը:*

- *Քննարկումներից հետո նկարը կրկին ցուցադրել՝ ավելի մանրամասնորեն դիտելու և քննարկելու համար:*
- *Ամփոփել՝հղում անելով սովորողների առաջ քաշած վարկածներին:*

Օրինակ.Քաղաքական ծաղրանկար /Հավելված 1/

- *5 վայրկյանով ցույց տալ Օսմանյան կայսրության սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի ծաղրանկարը՝ տպագրված ֆրանսիական երգիծական պարբերականում:*
- *Անջատել էկրանը:*
- *Ի՞նչ տեսաք և մտաբերեցիք պատկերից,ի՞նչ էր կատարվում պատկերում ,ի՞նչ կարող եք եզրակացնել տվյալ միջավայրի կամ ժամանակաշրջանի վերաբերյալ:*
- *Սովորողների առաջ քաշած վարկածներին հղումներ անելով ներկայացնել հայերի կոտորածները 1890-ական թթ..:*

Այլընտրանքային պատմություն *– Ինչպիսի՞ ընթացք կունենար պատմական իրադարձությունը , եթե գործոններն այլ լինեին : Այլընտրանքային պատմությունը կօգնի սովորողներին ավելի խորը դիտարկել պատճառահետևանքային կապերը , որոշել այս կամ այն գործոնների կարևորությունը:Սա նաև հիանալի հնարավորություն է բնույթով առավել փիլիսոփայական հարցեր քննարկելու .արդյո՞ք պատմության ընթացքը պայմանավորված է մարդկանց ազատ կամքից ու որոշումներից , թե կանխորոշված է սոցիալական և ինստիտուցիոնալ ավելի խորը գործոններով: Կարևոր է խուսափել այլընտրանքային պատմությունը պատահական գուշակությունների շարք դարձնելուց: Սովորողները պետք է իրենց պնդումները փաստերով ու աղբյուրներով հիմնավորեն , որի շնորհիվ էլ կկարողանան հասկանալ , թե որքան մեծ էր որևէ գործոնի դերը պատմության իրական ընթացքում:*

- *Սովորողների հետ կազմել պատմական իրադարձության իրական փաստարկված ընթացքի նկարագրությունը:*
- *Դուրս բերել և դասակարգել այն գործոնները ,որոնք ազդել են այդ ընթացքի վրա :*
- *Սովորողներին առաջարկել ինքնուրույն այլընտրանքային սցենարներ կազմել՝ընտրելով այն գործոնները , որոնք իրադարձության նոր սցենարներում չեն*

լինելու կամ այլ կերպ են դրսևորվելու: Քննարկել կազմված սցենարները: Այս ռազմավարությունը կարելի է կիրառել դասի ընկալման և կշռադատման փուլերում:

Նշումներ անելու 9 ռազմավարություն *- Շատ կարևոր է սովորողների մոտ զարգացնել նշումներ կատարելու ռազմավարությունները , քանի որ դասի ընթացքում բացի վերը նշված մեթոդներից կիրառվում են նաև դասագրքերի հետ տարվող ինքնուրույն աշխատանքներ և դասախոսություններ: Սովորողները պասսիվ լսողներից այս դեպքում էլ վերածվում են դասի սուբյեկտների՝կատարելով զանազան նոթագրումներ , որոնք օգտագործվում են դասի ընկալման և կշռադատման փուլերում:*

Հիմնական դրույթների քարտեզ *– ընթերցանության համար այս ռազմավարությունը քաջալերում է սովորողներին տրված նյութը բաժանել հիմնական մտքերի , երկրորդական մտքերի և այդ մտքերը հիմնավորող պնդումների:Այս մոտեցումն օգտակար է որպես դասարանում կատարված նշումների վերջնական մշակում , այսինքն՝ սովորողները կարող են իրենց կատարած խառը նշումները ամփոփելու համար դրանք վերածել հասկացությունների քարտեզի :*

Նոթագրում Քորնելի ռազմավարությամբ *– Այս ռազմավարությամբ նոթագրելու համար նշումները պետք է բաժանել 3 մասի հիմնական մտքերը կամ հարցերը գրվում են ձախակողմյան սյունակում , այդ հարցերի պատասխանները կամ դրանք հիմնավորող պնդումները գրվում են աջակողմյան , իսկ ներքևում կատարվում է դասի ընդհանուր ամփոփումը: /Հավելված 2/*

Եթե պատասխանը սա է, հարցը ո՞րն է *– Այս ռազմավարության շրջանակում սովորողները համարակալում են տեքստի պարբերությունները:Դրանից հետո կարդում են յուրաքանչյուր պարբերություն և փորձում հասկանալ , թե այն ինչպիսի հարցի է պատասխանում :Իրենց նշումների թուղթը բաժանում են 3 սյունակի . առաջին սյունակում գրում են պարբերության համարը , երկրոդ սյունակում՝հարցը , որին պատասխանում է պարբերությունը , իսկ երրորդ սյունակում՝ հարցի պատասխանը՝հիմնվելով պարբերության մեջ ներկայացված փաստարկների վրա:*

Նշագրում նկարով *– Շատ հաճախ նոթագրումներն իրականացվում են պատկերների միջոցով:Այս մոտեցումը նախընտրում են հատկապես այն*

աշակերտները , որոնք սիրում են նկարել:Այս ռազմավարությամբ նշումները գեղեցիկ են ստացվում և պատկերավոր ու հեշտ ընկալելի կերպով են ներկայացնում ուսումնասիրվող նյութի հիմնական գաղափարները:Այն նաև հնարավորություն է տալիս զարգացնել սովորողների ստեղծագործական ունակությունները:

Ստեղծիր Google Doodle- *Սա կարևոր ռազմավարություն է ժամանակակից տեխնոլոգիաների օգնությամբ պատմական կարևորության հարց քննարկելու համար:Այն Google-ի գլխավոր էջում պատկերվող լոգոյի փոփոխությունն է՝ որևէ տոն իրադարձություն կամ անհատ կարևորելու համար:*

Սովորողներին առաջարկել որևէ թեմայի ուսուցման վերջում ստեղծել սեփական Google Doodle-ը.

- *Այն պետք է ներկայացնի սովորողի մեկնաբանությամբ թեմայի առանցքային կետերը , կարևոր իրադարձությունները կամ կերպարները:*
- *Սովորողները պետք է ազատ լինեն խորհրդանիշեր,գույներ,պատկերներ օգտագործելուց և տեսանկյունն ընտրելուց:*
- *Քննարկել ստեղծված տարբերակները՝ սովորողներին առաջարկելով ներկայացնել սեփական մոտեցում- որոշումները:*

Այստեղ ներկայացված ռազմավարությունները ընտրված էին դասի տարբեր փուլերում կիրառելու համար:Սակայն դրանք սահմանափակ չեն:Ուսուցիչը սահմանափակված չէ մեթոդներ ընտրելիս , քանի որ դեպի նպատակը տանող ցանկացած մեթոդ արժանահավատ և ողջունելի է:Իսկ յուրաքանչյուր ուսուցչի նպատակն է կրթել, դաստիարակել և զարգացնել անձ՝ զինված գիտելիքներով, կարողություններով ,հմտություններով և ազգային ու համամարդկային արժեհամակարգով :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքի արդյունքում կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- *Ուսուցումը հենց զարգացնող միտում ունի: Սակայն ուսուցման զարգացնող գործառույթը ավելի արդյունավետ է գործում, երբ այն ընդգրկում է սովորողների գործունեության տարբեր ոլորտներ (ինտելեկտուալ, մոտիվացիոն , շարժողական և այլն): Ուրեմն անհրաժեշտ է որոնել այդ ոլորտները գործընթացի մեջ դնելու նոր ուղիներ ու միջոցներ: Զարգացնող ուսուցման գործառույթների իրականացումը ենթադրում է ազդեցությունների ոլորտների ընդարձակում, ուսումնական գործունեության մեջ ստեղծագործական տարրերի ուժեղացում:Զարգացնող ուսուցում առանձին գոյություն չունի:Այն ուսուցման և կրթական գործառույթների հետևանք է:*
- *Քանի որ տեսության մեջ և պրակտիկայում հաշվի չէր առնվում աշակերտական դասանպատակը, և այն չէր որոշվում ու ձևակերպվում, բնական է , որ ուսուցման մեթոդների մշակողները չէին մտածում մեթոդների այնպիսի գործառույթների մասին,որ պետք է դրսևորվեին աշակերտի դասանպատակի առաջացմամբ:Այսօր , երբ ամենուրեք գրվում և խոսվում է հումանիստական և համագործակցության մանկավարժությունների , ինտերակտիվ ուսուցման մեթոդների , մանկավարժական բարձր տեխնոլոգիաների մասին,չափազանց կարևորվում է նպատակահարուցումը , առանց որի աշակերտը չի կարող դառնալ ուսումնական գործունեության լիարժեք սուբյեկտ:Հետևաբար,դասերի ընթացքում հարկավոր է կիրառել տարաբնույթ ուսումնական ռազմավարություններ, որոնք միտված են պատմության դասավանդումը դարձնել բովանդակային ու մոտիվացնող՝ նույնիսկ այն պատմական թեմաների պարագայում,որոնց հանդեպ սովորողները ավանդաբար ունեցել են անտարբեր վերաբերմունք:Աշխատանքի մեջ ներկայացված մեթոդները հնարավորություն են տալիս պատմական ակտիվ մտածողություն զարգացնել գործընթացային վեց հասկացություններից ոչ միայն յուրաքանչյուրի ,այլև մի քանիսի շրջանակում միաժամանակ:*

- *Հետևաբար,պատմություն սովորելու և առարկայորեն ճիշտ մտածելու կարողություններ զարգացնելու համար հարկավոր է առարկային մոտենալ որպես գիտական հետազոտող, որը հնարավորություն կտա զարգացնել նաև ինքնուրույն ճանաչողական հմտություններ:Այդ մասին Մ.Բլոկը գրում է.«Ուսումնասիրողը պատմական խնդիրները ձևակերպում է՝ ելնելով արդիականությունից :Ներկայի մեջ անցյալի նման ներբերումը իրականացվում է հարց ու պատասխանի մեթոդով՝անցյալին առաջադրելով հարցեր , որոնք արդիական են: Ուստի անմիջապես փաստաթղթերի վրա հիմնվող հետազոտությունը կարող է զրկվել ամենայն գիտական հետաքրքրությունից , եթե այն պատասխանում է այնպիսի հարցերի , որոնք արդիական չեն:Ավելի կոնկրետ՝ անցյալի պատմությունը չպետք է տարանջատվի արդիությունից ,քանի որ արդիությունն ի զորու է պատմագետի առջև բացելու անցյալի հեռանկարն իր ողջ խորությամբ ու ընդգրկմամբ :Ձևակերպելով իր խնդիրը և մեկնարկելով դրանից՝ պատմագետը սակայն ,պետք է զգույշ լինի , որ արդիությունն իր տակ չճզմի անցյալը:Անցյալի մարդուն հարց ուղղող պատմագետը երբեք չպետք է նրան պատասխաններ պարտադրի,այլ պետք է ականջալուր լինի նրա ձայնին ու փորձի վերակառուցել նրա անցյալն ու հոգևոր աշխարհը:Պատմության հետազոտությունը արդիության և անցյալի հարատև երկխոսությունն է:Այս իմաստով պատմության հետազոտության ուղին ոչ թե միակողմանիորեն գնում է անցյալից ներկա , այլ նաև ներկայից անցյալ՝ հետադարձ կապի ակտիվացմամբ ,ուր և կարևորվում է հետազոտողի ստեղծագործական ակտիվությունը».*[9]

Առաջարկություններ

Պատմության ուսուցումը արդյունավետ դարձնելու և սովորողների մոտ պատմական իրադարձությունների ընկալման բազմատեսանկյուն մոտեցում ձևավորելու համար հարկավոր է .

1. *Դասագրքերը կազմել որոշակի մեթոդաբանությամբ: Բեռնաթափումը կամ բարեփոխումը պետք է կատարվի այդ տեսանկյունից ,այլ ոչ թե մտքեր ,դեպքեր կամ նախադասություններ ավելացնելով կամ պակասեցնելով:*
2. *Հարցեր և առաջադրանքներ բաժնում հարկավոր է ընդգրկել որոնողական , հետազոտական և ինքնուրույն ճանաչողական հմտություններ զարգացնող առաջադրանքներ :*
3. *Ավագ դպրոցում,քանի որ սովորողների մոտ ավելի շատ դրսևորվում է փիլիսոփայական մտածողությունը ,հարկավոր է դասագրքերը կազմել՝ դրանց մեջ ընդգրկելով ստեղծագործական մտածողությունը զարգացնող հետազոտական առաջադրանքներ կամ որպես ուսումնասիրության բաժին պատմության օժանդակ գիտություններից որևէ մեկը, օրինակ, դիվանագիտության պատմություն , հնագիտություն , դրամագիտություն և այլն:*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱմիրջանյանՅու.Ա.,ՍահակյանԱ.Ս.,Մանկավարժություն:-Մանկավարժ հրատ.:-2005 [1], էջ135
2. Բերդյան Ն.,Պատմության իմաստը: Թարգմ.՝ Դավիթ Մոսինյանի.-Եր.:ՎՄՎ-պրինտ,Բանք,2019 [2], էջ5
3. Բլոկ Մ.,Պատմության պաշտպանական կամ պատմաբանի արհեստը,Սարգիս Խաչենց.Փրինթինֆո.Անտարես.Եր.-2018, էջ 17
4. Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն: Նոր դասընթաց : -Եր.: «Զանգակ-97», 2005 [4,5,6,7]էջ426-428,էջ 453, էջ 472-482 ,էջ 470
5. «Պարադիգմա» կրթական հիմնադրամ(2020):Գիրք պատմութան ուսուցման. ինչու՞,ինչպե՞ս: [3,8] էջ 17-29, էջ65-69, էջ75, էջ93-102

ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ ԿԱՄ ՀԱՐՑԵՐԸ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԿԱՄ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ՊՆԴՈՒՄՆԵՐԸ
- Անկում էր ապրել Արշակունիների թագավորությունը: - Դենշապուհը բարձրացրել էր հայերից գանձվող հարկերը: - Հազկերտը կրոնափոխության պահանջ էր ներկայացրել հայ ժողովրդին, որը հայ նախարարները որոշել էին մերժել: - Հայ նախարարները որոշել էին ապստամբել Պարսկաստանի դեմ և ունեին Թեոդոսիոս կայսրի աջակցությունը: - 450թ.Թեոդոսիոս կայսրը մահացավ:Նրան հաջորդած Մարկիանոսը չցանկացավ Պարսկաստանի դեմ պատերազմել: - Վարդան Մամիկոնյանն ու նրա կողմնակիցները գտնում էին , որ ճիշտ է գնալ ապստամբության ճանապարհով ՝անկախ Արևմուտքի օգնության առկայությունից: - Վասակ Սյունին հրաժարվեց ապստամբությունից, քանի որ առանց արտաքին օգնության ուժերը բավարար չէ: - Հրովարտակից հետո նախարարաները ուղևորվում են Տիզբոն,առերես ընդունում է զրադաշտականություն և վերադառնում Հայաստան՝ ապստամբություն սկսելու: - 450թ. հաղթում են Խաղխաղի ճակատամարտում : - 451թ. տեղի է ունենում Ավարայրի ճակատամարտը: - Պայքարը շարունակվում է , մինչև Հազկերտը նախարարների դեմ դատ է սկսում: - Հազկերտը մահապատժի է ենթարկում նախարարների մեծ մասին: - Պարսկաստանը գնում է բազմաթիվ զիջումների . հայտարարավում է կրոնական ազատություն ,ներում է շնորհվում փախստականներին ու քաղաքական հանցագործներին:	Ինչու՞ ապստամբություն սկսվեց: Որքանո՞վ էին նախարարների որոշումները կրոնական կամ քաղաքական: Ինչու՞ նախարարները բաժանվեցին երկու խմբի: Արդյո՞ք ճիշտ էր ապստամբության գնալը: Ի՞նչ ընթացք ստացան դեպքերը: Որքանո՞վ էր ճիշտ առերես կրոնափոխ լինելը: Ինչպիսի՞ հետևանքներ եղան:

ԱՄՓՈՓՈՒՄ: 5-րդ դարի առաջին կեսին unicodeհայ նախարարներն ապստամբեցին Պարսկաստանի դեմ:Արտաքին և ներքին տարբեր հանգամանքներից ելնելով՝ ապստամբությունը ռազմական հաջողություն չունեցավ ,սակայն Պարսկաստանը բազմաթիվ զիջումների գնաց:

ՆՈԹԱԳՐՈՒՄ ՔՈՐՆԵԼԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ [Հավելված 2]

ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԻ ԾԱՂՐԱՆԿԱՐԸ [ՀԱՎԵԼՎԱԾ 1]